Ալբերտ Հայրապետյան
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող,
տնտեսագիտության թեկնածու

Երրորդ հազարամյակի պետության մոդելն ըստ Լիխտենշտեյնի իշխան Հանս-Ադամ Երկրորդի

Նախաբան

«...Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի...» Հայաստանի և հայ ժողովրդի մասին ասված քերթողահայր Խորենացու այս խոսքերը թերևս ճիշտ են նաև Ավստրիայի և Շվեյցարիայի միջև ընկած մի միկրոպետության՝ Լիխտենշտեյնի Իշխանապետության համար: Լիխտենշտեյնը, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, առաջինն է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությամբ: Երկիրը միակն է ամբողջ Եվրոպայում, որի սահմանները վերջին հարյուրամյակներում որևէ փոփոխության չեն ենթարկվել՝ այն դարձնելով Սրբազան Հռոմեական Կայսրությունից մնացած միակ նշխարը: Ընդսմին, իր պատմության ընթացքում միկրոպետությունն ականատես է եղել Հին Աշխարհամասում տեղի ունեցող բազմաթիվ վայրի-վերումների և վերաձևավորումների, անգամ հասցրել է ընդհանուր սահման ունենալ Երրորդ Ռեյխի հետ, սակայն Ֆրանց Ջոզեֆ Երկրորդ իշխանի հմուտ դիվանագիտության շնորհիվ զերծ է մնացել վերջինիս կողմից բռնակցումից, գործողություն, որը հիտլերյան բանակից, հավանաբար, ոչ պակաս կխլեր: Լիխտենշտեյնը միայն վերջին տասնամյակներում է զարգացել: Այդ զարգացումը մեծապես կապված է Եվրոպայի ամենահարուստ միապետի՝ Հանս-Ադամ Երկրորդ Լիխտենշտեյնի (երկրի անվանումը սերում է իշխանական տոհմի ազգանունից) կյանքի և գործունեության հետ, ում հաջողվեց ագրարային և ոչ այնքան հարուստ միկրոպետությունը դարձնել աշխարհի ամենաբարեկեցիկ երկրներից մեկը:

Այսօր հայկական ակադեմիական շրջանակներում, ինչպես նաև ԶԼՄ-ներում հաճախ են քննարկում Սինգապուրը, Իսրայելը և մի շարք այլ երկրներ, որպես հմուտ կառավարման օրինակ: Լիխտենշտեյնի մասին, որն, ի տարբերություն Իսրայելի ու Սինգապուրի, ոչ միայն դեպի ծով ելք չունի, այլև աշխարհի երկու երկրներից մեկն է, որը շրջապատված է դեպի ծով ելք չունեցող պետություններով (մյուսը՝ Ուզբեկստանն է): Քչերս գիտենք, որ հիրավի տնտեսական հեղափոխություն արած միապետը 2009թ.-ին «Պետությունը Երրորդ Հազարամյակում» վերնագրով տրակտատ է հրատարակել, որտեղ ներկայացված քաղաքագիտական և կառավարչական նորարարությունների մի մասը կիրառել է սեփական երկրում՝ խորհուրդ տալով աշխարհին շարժվելու այդ մոդելով կամ մտածելու այդ մոդելի մասին: Իշխանը իր գաղափարները ներկայացրել է բազմաթիվ բարձր ամբիոններից, այդ թվում ՄԱԿ-ի ամբիոնից և Օքսֆորդի համալսարանում: Մեզ՝ հայերիս համար, հատկապես արցախյան հակամարտության կարգավորման համատեքստում, ավելի կարևոր է այն, որ Լիխտենշտեյնի իշխանի և Լիխտենշտեյն պետության քաղաքական նպատակներից մեկը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումն է: Հատուկ այդ նպատակով Հանս-Ադամ Երկրորդը Փրինսթոնի հեղինակավոր համալսարանում հիմնադրել է Ժողովուրդների ինքնորոշման Լիխտենշտեյն ինստիտուտը (Liechtenstein institute on self-determination), որտեղ, ի թիվս այլ հիմնախնդիրների, գիտնականները հետազոտում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրագործման հնարավորությունները: Համոզմունք ունենալով, որ հաջողակ գործարար և պետական գործիչ Նորին Խաղաղ Բարձրություն Հանս-Ադամ Երրորդի մտքերն ու գաղափարները արժանի են ոչ պակաս ուշադրության, քան հայերեն թարգմանված օտարերկրյա մի շարք առաջնորդների

ու գործարարների գրքեր և ինքնակենսագրականներ՝ ստորև ներկայացված «Պետությունը երրորդ հազարամյակում» գրքի վերլուծական ամփոփումը նպատակ ունի հայ ընթերցողին ներկայացնել աշխարհում գուցե ոչ ամենահայտնի, սակայն յուրօրինակ մի տրակտատի հիմնական բովանդակությունը:

Լիխտենշտեյնի տնտեսական հրաշքի մասին

Իշխանը գրում է, որ երբ փորձագետներին հարցնում են, թե ինչի շնորհիվ է հարստացել Լիխտենշտեյնը, վերջիններս հիմնականում մատնանշում են զբոսաշրջությունը, նամականիշների թողարկումը կամ ֆինանսական հատվածը: Զբոսաշրջությունն իրավամբ զարգացած էր նախքան երկրորդ աշխարհամարտը, սակայն հասկանալի պատճառներով պատերազմական ժամանակաշրջանում ոլորտն անկում ապրեց և հետագայում էլ համեստ մասնաբաժին ունեցավ երկրի ՀՆԱ-ում: Ի զարմանս շատերի, տնտեսության լոկոմոտիվի դերը կատարում է ո՛չ նամականիշների արտադրությունը, ո՛չ էլ նույնիսկ ֆինանսական հատվածը, այլ տնտեսության իրական հատվածը, որը գլխավորապես բաղկացած է ՓՄՁ-ներից, որտեղ աշխատում է երկրի աշխատունակ բնակչության շուրջ 40%-ը: Քիչ պետություններ կարող են հպարտանալ վերազգային կորպորացիաներով, սակայն մոտ 37000 բնակչություն ունեցող Լիխտենշտեյնում է հիմնադրվել Hilti վերազգային կորպորացիան: Սակայն, որքան էլ զարմանալի է, այսօր Լիխտենշտեյնն ունի ավելի շատ ռեզիդենտ կազմակերպություններ, քան բնակչություն: Ավանդաբար ցածր հարկերը, որակյալ աշխատուժը և Հաբսբուրգների դինաստիայի հետ ունեցած մաքսային միության համաձայնագիրը հրապուրել է Եվրոպայի տեքստիլ արտադրության առաջատարներին: Հաբսբուրգների անկումից հետո երկիրը տնտեսական ինտեգրման մեջ է մտնում հարևան Շվեյցարիայի հետ՝ ստեղծելով տնտեսական և արժութային միություն, իսկ Նորվեգիայի ու Իսլանդիայի հետ կազմելով Եվրոպական Ազատ Առևտրի Ասոցիացիան (ԵԱԱԱ), մաս է կազմում նաև եվրոպական միասնական ընդհանուր շուկային, որի մեջ մտնում են ԵՄ և ԵԱԱԱ երկրները: Լիխտենշտեյնը աշխարհի եզակի պետություններից է, որը չունի պետական պարտք, իսկ Standard&Poors հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունը երկրի ֆինանսական համակարգին տվել է առավելագույն՝ AAA գնահատականը:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին

Տրակտատի առանցքային գաղափարը ժողովուրդների ինքնորոշման իրավունքն է, որը ոչ միայն իշխանի անձնական համոզմունքն է, այլև պետության արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը: 1990թ.-ին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայում իր առաջին իսկ ելույթի ժամանակ Հանս-Ադամ Երկրորդը առաջակում է իրավական որոշակիություն հաղորդել ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին, որն ամրագրված է նաև ՄԱԿ-ի կանոնադրությամբ: Հատկանշական է, որ իշխանը ոչ միայն խոսում է, այլև՝ գործում: **Լիխտենշտեյն միկրոպետությունը աշխարհի միակ պետությունն է, որի Սահմանադրությունը հնարավորություն է տալիս 11 վարչական միավորներին հանրաքվե անցկացնել և անկախանալ՝ ստեղծելով նոր պետություն:** Սահմանադրորեն ամրագրված իր համոզմունքները հիմնավորելու համար իշխանը բերում է հարևան Շվեյցարիայից պատմությունից մի օրինակ: Բեռն կանտոնի (որն ընդգրկում է նաև երկրի մայրաքաղաքը) Յուրա երկրամասում բնակվող ֆրանսիացի կաթոլիկները չէին ցանկանում միևնույն կանտոնի մեջ ապրել գերմանացի բողոքականների հետ, ինչն էլ ազգայնական հողի վրա բռնկումների և միջէթնիկ բախումների պատճառ էր դարձել: Կենտրոնական կառավարության միջամտությունից հետո Յուրա երկրամասի բնակիչները 1974թ.-ն հանրաքվե անցկացրեցին՝ դառնալով առանձին կանտոն: Արդյունքում, ոչ միայն վերականգնվեց տեղական խաղաղությունը, այլև Յուրան դարձավ երկրի ամենազարգացած կանտոններից մեկը, իսկ ֆրանկոֆոն այն համայնքները, որոնք ցանկացել էին մնալ Բեռն կանտոնի կազմում, միացան Յուրա կանտոնին:

Ուշագրավ է, որ Հանս-Ադամ Երկրորդի կարծիքով, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը ոչ թե երկրների տրոհման, այլ տարածքային ամբողջականության պահպանման նպատակ ունի: Վերջինս պնդում է, որ 1980-ականներին ԽՍՀՄ-ում իրականացված բարեփոխումները միգուցե հաջողվեին և երկիրն էլ չկազմաքանդվեր, եթե ժողովուրդների ինքնորոշման իրավունքը արդյունավետորեն իրացվեր: Իշխանը ներգրավված է եղել Կանադայի ներքին խնդիրների լուծման գործում, երբ Քվեբեքում բնակվող ֆրանսիացիները ձգտում էին անկախության: Իշխանի առաջարկով Սուրբ Լորենցի շրջակայքում բնակվող ֆրանսիացիներին պետք է առաջարկվեր անկախությունը որպես լուծում, քանի որ այդ տարածքներում էին բնակվում ֆրանսիացիների մեծամասնությունը, սակայն Քվեբեքի կենտրոնը՝ Մոնրեալը, պետք է մնար Կանադայի կազմում: Արդյունքում, անկախության գաղափարը կորցնում էր իր տնտեսական նշանակությունը, ինչի արդյունքում պահպանվեց երկրի խաղաղությունը և տարածքային ամբողջականությունը: Նմանապես, իշխանի կարծիքով, հնարավոր կլիներ պահպանել Հարավսլավիայի անկախությունը, եթե երկիրը կատարեր առանձին երկրամասերի սահմանների ճշգրտումներ, քանի որ Սլովենիայից բացի, երկրի բոլոր բաղկացուցիչ մասերի սահմանները արհեստականորեն էին գծված:

<u>Մեծ և փոքր երկրների ժամանակաշրջանների մասին</u>

Լինելով միկրոպետության ապագա միապետ՝ իշխան Հանս-Ադամը դեռ ուսանողական տարիներից խորհում էր, թե արդյոք 21-րդ դարում միկրոպետությունը ունի ապագա, թե ոչ: Ուսումնասիրելով պատմությունը՝ իշխանը եկել է այն համոզման, որ որոշակի ժամանակաշրջաններում տարածված են եղել փոքր և միկրոպետությունները, մինչդեռ եղել են նաև կայսրությունների և խոշոր պետությունների ժամանակաշրջաններ: Օրինակ, նախքան Հռոմեական Կայսրության ոսկեդարը, Եվրոպայում զարգանում էին հունական փոքր քաղաք պետությունները, իսկ միջնադարում, կայսրության անկումից հետո Եվրոպայում մեծաթիվ էին փոքր պետությունները: Ըստ իշխանի, պատճառը զուտ տնտեսական է: Փոքր պետությունների ներքին արտադրողները ավանդաբար եղել են արտահանման կողմնորոշմամբ, որովհետև փոքր պետությունները տրամաբանորեն ի զորու չեն գրավել ներդնողներին և արտադրողներին շուկայի ծավալներով: Արդյունաբերական հեղափոխությունից հետո, երբ ձեռագործ հատային արտադրությունը փոխարինվեց զանգվածային սերիական արտադրությամբ, փոքր երկրները հայտնվեցին կրկնակի ոչ շահեկան իրավիճակում, քանի որ, նախ, ստիպված էին հումքի պակասը լրացնել ներմուծվող հումքով, որը մաքսատուրքերի պատճառով շատ թանկ էր և, բացի այդ, դժվար էր մրցակցել պետության հովանավորչությունը վայելող մեծ երկրի տեղական արտադրողի հետ, իսկ կողմնորոշումը դեպի տեղական շուկա, ինչպես արդեն նշեցինք, աննպատակահարմար էր: Եվրոպայի երկրներն աստիճանաբար խոշորացան (օրինակ, այդ ժամանակաշրջանում տեղի ունեցավ ռիսորջիմիենտոն՝ Իտալիայի վերամիավորումը): Գաղութատիրության ժամանակաշրջանում երկրները հիմնականում վարում էին հովանավորչական քաղաքականություն՝ սահմանելով բարձր մաքսատուրքեր և իրենց սահմաններում կարողանում էին արտադրել գրեթե ամեն բան: Այդ ժամանակ ի հայտ եկավ «որքան մեծ, այնքան լավ» մոտեցումը: Հետագայում, ապագաղութացմամբ և տնտեսական ազատականացման հաստատմամբ, սկսվեց փոքր երկրների դարաշրջանը, քանի որ շեշտը դրվում էր ոչ միայն արտադրանքի մեծ ծավալների, այլև էժան, կիրթ և նորարարական գաղափարներով հարուստ աշխատուժի վրա: Իշխանի կարծիքով, 20-րդ դարի երկրորդ կեսերին գաղութները վերացան, նախ և առաջ, տնտեսական պատճառներով, քանի որ համընդհանուր ազատականացմամբ պայմանավորված, ռեսուրսների հասանելիությունը այլևս աննպատակահարմար դարձրեց գաղութների պահպանումը, որոնք էլ դարձան ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական բեռ: Իշխանը անուղղակիորեն նշում է նաև միջազգային տնտեսագիտությունից հայտնի ռեսուրսների

անարդյունավետ տեղաբաշխման (deadweight loss) մասին, որն առաջանում է, երբ ներմուծող երկիրը սահմանում է ներմուծման մաքսատուրք: Ի լրումն իշխան Հանս-Ադամի մտքերի, նշենք, որ «մեծ երկրների» ժամանակաշրջանում գերիշխող էին ազգայնական մերկանտիլիստների և գյուղատնտեսության մեջ հիմնական հարստությունը տեսնող ֆիզիոկրատիզմի գաղափարները, մինչդեռ, երբ տարածում ստացան ազատական գաղափարները, գոյություն ունեցող միկրոպետությունները (Լյուքսեմբուրգ, Լիխտենշտեյն, Մոնակո և այլն) ոչ միայն պահպանեցին իրենց գոյությունը, այլև դարձան ամենաբարեկեցիկ երկրները:

<u>Օրենքների վերաբերյալ</u>

Իշխանի պնդմամբ, ժամանակակից պետությունները ստեղծել են ծայրաստիճան խրթին իրավապայմանագրային դաշտ: Որքան շատանում են օրենքներն ու կարգավորումները, այնքան ավելի անպաշտպան է դառնում քաղաքացին նույնքան խոցելի իրավունքների պաշտպան-վածության տեսանկյունից: Օրենսդրական այդ ամբողջ խրթին համակարգը ոչ միայն ընկալելի չէ քաղաքացիների համար, այլև վերջինիս իրագործման վերահսկողությունն է լուրջ ծախս պետության համար: Իշխանը առաջարկվում է մարդու ամենօրյա գործունեությանն առնչվող հիմնական օրենքները սովորեցնել կրթօջախներում, ինչպես նաև կազմել ժողովածու և այն անվճար կամ գրեթե անվճար բաժանել մարդկանց: Օրենքների միջև հակասությունը պետք է մեկնաբանվի ի օգուտ քաղաքացու, որովհետև, ըստ իշխանի, քաղաքացին չպետք է պատասխանատվություն կրի պետության բացթողումների համար:

Օրենքների վերաբերյալ բազմաթիվ առաջարկների մեջ ներկայացնենք, մեր համոզմամբ, ամենասադրիչը: Ըստ իշխանի, թմրանյութերի դեմ պայքարը թանկ հաճույք է և հսկայական գումարների կորուստ: Պայքարել, իհարկե, պետք է, սակայն շուկայական մեխանիզմներով: Թմրանյութի բարձր գնի հիմնական պատճառը ոչ թե ինքնարժեքն է կամ տրանսպորտային մեծ ծախսերը, այլ այն ռիսկը, որն առկա է կոշտ իրավակարգավորումների պայմաններում աղքատ երկրներից դեպի հարուստ երկրներ թմրանյութերի տեղափոխումը: Դիցուք, պետության համար թմրանյութերի աճեցումը մեծ ծախսերի հետ կապված չէ և, ըստ իշխանի, թմրամոլներին թմրանյութերից զրկելու փոխարեն պետք է տրամադրել թմրանյութերն այդ նպատակով նախատեսված հատուկ վայրերում՝ մասնագետների հսկողությամբ: Այդ պարագայում թմրանյութերի բիզնես անողները մրցակցությանն ուղղակի չեն դիմանա, իսկ բիզնեսը կդառնա ոչ շահավետ:

<u>Ազգայնականության և սոցիալիզմի, ազատականության և քրիստոնեության մասին</u>

Գրքում իշխանը փորձ է կատարում բացատրելու, թե ինչու են ազգայնականների կողմից կառավարվող երկրները ընտրում սոցիալիստական գաղափարախոսությունը: Ըստ իշխանի՝ ազգայնականությունը և սոցիալիզմը «քայլում են կողք կողքի», քանի որ, ազգայնականների համոզմամբ, ընտրյալ ժողովուրդների համար պետք է ստեղծվեն ընտրյալ պայմաններ: Ընտրյալ պայմաններ ասելով, պետք է հասկանալ անվճար կրթություն, առողջապահություն, ենթակառուցվածքներ և այլն: Իսկ ինչպե՞ս կարող է կառավարությունը ստեղծել ընտրյալ պայմաններ, եթե ոչ հարկերը բարձրացնելով: Իշխանը, ով շուկայական տնտեսության ջատագով է, պնդում է, որ ապագաղութացումից հետո երկրների չեն կարողացել ստեղծել կենսունակ տնտեսություն և ժողովրդավարություն հենց ազգայնական շարժումների պատճառով: Ազգայնական շարժումներն, ըստ իշխանի, պատճառ հանդիսացան Հաբսբուրգների կայսրության փլուզման, ինչպես նաև Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական հետա-մնացության համար: Սինգապուրը և Հարավային Կորեան բացառություններ են, որոնք ապացուցում են օրինաչափությունը:

Ազատական գաղափարախոսության հետևորդները, փորձելով կյանքի կոչել իրենց գաղափարները, որպես փաստարկ ներկայացրեցին ազատ առևտրի առավելությունների մասին վերոշարադրյալ փաստարկները: Սակայն ըստ իշխանի՝ ազատականությունը որպես գաղափարախոսություն, մնաց և շարունակում է հանդես գալ որպես մտավոր շարժում, քանի որ հասարակության լայն զանգվածների համար առավել ունկնահաճո են սոցիալիստական և ազգայնական գաղափարները: 19-րդ դարի Եվրոպայում ազատականության հիմնական հակառակորդները պահպանողականները, ֆերմերներն ու արհեստավորներն էին, որոնք, ի դեմս ազատ առևտրի արտոնման, տեսնում էին լուրջ վտանգ: Մայրցամաքային Եվրոպայում արդյունաբերության ներկայացուցիչների ուղղակի շահերից էին բխում բրիտանական ներմուծվող ապրանքների վրա կիրառվող բարձր մաքսատուրքերը, և ազատականներին այլ բան չէր մնում, քան մայրցամաքային Եվրոպայի ներսում ազգայնականների հետ ժամանակավոր կոալիցիա կազմելն՝ ընդդեմ պահպանողական-կրոնական խմբերի: Եկեղեցին, ի դեմս ազատականների, տեսնում էր քաղաքական հակառակորդի: Սակայն, նույնիսկ եկեղեցու՝ որպես քաղաքական սուբյեկտի, թուլացումը և թեոկրատական լեգիտիմության ապալեգիտիմացումը չամրապնդեցին ազատականների դիրքերը 19-րդ և 20-րդ դարերում: Եվրոպայում հիմնական քաղաքական գործոնը դարձան ազգայնականները, ինչի արդյունքում տեղի ունեցան հայտնի երկու աշխարհամարտերը:

Ըստ իշխանի՝ ազատականությունը և քրիստոնեությունն ունեն բազում ընդհանրություններ: Երկու ուսմունքներն էլ մարդակենտրոն են և հասարակության կենսագործունեության առանցքում տեսնում են մարդուն, ի տարբերություն ազգայնականների և սոցիալիստների, որոնք շեշտը դնում են ոչ թե անհատի, այլ հասարակության վրա: Ազատականությունը և քրիստոնեությունն, ըստ էության, համամարդկային համոզմունքներ են այն իմաստով, որ տարբերություն չեն դնում մարդկանց մեջ և պնդում են, որ պետությունը պետք է ծառայի մարդուն և ոչ թե հակառակը:

<u>Լեգիտիմության և ժողովրդավարության մասին</u>

Իշխանի տրակտատը հարուստ է պատմական ակնարկներով և փաստերով: Պարզության համար միապետը առանձնացնում է պետության կառավարման երեք տեսակ՝ ժողովրդավարություն, օլիգարխիա և միապետություն: Նա «օլիգարխիա» եզրույթը սահմանում է բավականին լայն և յուրովի՝ շեշտելով, որ օլիգարխները կարող են լինել ինչպես ազնվականներ, ինչպես ժամանակին Լեհաստանը ղեկավարող ազնվականները, այնպես էլ զինվորականներ, դատավորներ և այլն, այլ կերպ ասած, մի խումբ մարդկանց իշխանություն: Հին ժամանակներում, ըստ իշխանի, կար համոզմունք, որ կառավարման նշյալ մոդելները շարունակաբար հաջորդում են միմյանց և ոչ մի մոդել կայուն չէ: Սակայն այս երեք մոդելների տարրերի միախառնումը և սահմանադրորեն ամրագրումը նպաստեց մոդելի կայունության պահպանմանը: Որպես օրինակ իշխանը նշում է Հռոմեական կայսրությունը և կառավարման ժամանակակից անգլիական մոդելը: Ըստ միապետի՝ իշխանության լեգիտիմության աղբյուրները երկուսն են՝ Աստծո կողմից տրված լեգիտիմություն և ժողովրդի կողմից տրված լեգիտիմություն: Առաջինն, ըստ միապետի, արդիական էր միջնադարում, որից էլ ածանցվում էր կոնկրետ արքայատոհմին պատկանելու հիմքով պայմանավորված լեգիտիմությունը: Նախքան 18-րդ դարի ամերիկյան հեղափոխությունը, քչերն էին հավատում, որ ժողովրդավարությունը կենսունակ մոդել է մեծ պետություններում: Առանձնահատուկ կերպով կցանկանայինք շեշտել, որ լինելով իշխանական ընտանիքից՝ իշխանը երդվյալ դեմոկրատ է, որը կարելի է տեսնել վերջինիս տրակտատում և իր մի շարք մոտեցումներ հիմնավորվել են իր գործունեությամբ և նախաձեռնություններով: <u>Վերջինիս նախաձեռնությամբ քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվել Սահմանադրության 113-րդ հոդվածի հատկանիշներով հավաքել 1500 ստորագրություն և հանրաքվեի դնել միապետության</u>

վերացման առաջարկը: Առաջարկի ընդունման պարագայում խորհրդարանը պետք է ներկայացնի նոր՝ հանրապետությանը ներհատուկ սահմանադրություն: Ինչպես 2003թ.-ին, այնպես էլ 2012թ.-ին Լիխտենշտեյնի բնակչության գերակշիռ մասը դեմ է արտահայտվել իշխանի իրավունքների, այդ թվում՝ վետոյի իրավունքի սահմանափակմանը: Ինչ վերաբերում է «միապետություն, թե՞ հանրապետություն» հարցին, ապա, իշխանի պնդմամբ, միապետությունների ժամանակաշրջանը պատմականորեն շատ ավելի երկար է և կայուն, ուստի, իր համոզմամբ, ոչ թե պետք է միայն արարողակարգային դերակատարություն վերապահել միապետներին և պետությունների բյուջեներից հսկայական գումարներ ծախսել, այլ վերջիններիս տալ ժողովրդավարական լեգիտիմություն: Այս համատեքստում և գրքի մի շարք այլ հատվածներում իշխանը մատնանշում է հանրապետություններում քաղաքական գործիչների՝ ընտրվելու և վերընտրվելու ցանկությամբ պայմանավորված որոշումները, որոնք երկարաժամկետում կարող են լուրջ վտանգներ պարունակել:

Ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարություն. Լիխտենշտեյնի մոդելը

Ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարություններում, ըստ իշխանի, տարբերությունը զսպող և հակակշռող սուբյեկտն է: Ըստ իշխանի, ուղղակի ժողովրդավարության օրինակ Շվեյցարիայում գործադիր, օրենսդիր և դատական իշխանությանը հակակշռում է ժողովուրդը՝ հանրաքվե անելու իր իրավասությամբ, մինչդեռ ԱՄՆ-ում մեծ լիազորություններով օժտված նախագահին հակակշռում է օրենսդիրը: Իշխանը իր պատկերացրած բարեփոխումները իրականացրել է Լիխտենշտեյնում՝ 2003թ.-ի սահմանադրական փոփոխություններով, որի էությունը հետևյալն է.

1. քաղաքացիները կարող են հավաքել համապատասխան քանակությամբ ստորագրություններ՝ հանրաքվեի դնելով խորհրդարանի (landtag) որոշումը:
2. Համապատասխան քանակությամբ ստորագրություններ հավաքելու դեպքում քաղաքացիները ունեն նախաձեռնություններ առաջ քաշելու իրավունք, որը խորհրդարանը կարող է ընդունել կամ մերժել: Մերժման դեպքում հարցը դրվում է հանրաքվեի, որի ժամանակ խորհրդարանն իրավունք ունի ներկայացնել իր նախագիծը, որը նույնպես դրվում է հանրաքվեի:
3. Առանձին շրջանը կարող է դուրս գալ պետության կազմից: Ըստ միապետի, անհնար է պատկերացնել, որ ժողովրդավարությանը իրապես կողմ մարդը դեմ արտահայտվի ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին:

Ինչպես արդեն նշեցինք, Լիխտենշտեյնի Իշխանապետությունում ժողովուրդն իրավունք ունի հանրաքվեի միջոցով վերացնել միապետությունը: Սակայն դա իշխանական ընտանիքի միակ կառավարչական նորամուծությունը չէ: Եթե աշխարհի այլ միապետություններում գահը ժառանգվում է միապետի անգործունակության կամ մահվան դեպքում, ապա Լիխտենշտեյնում Սահմանադրությունը հնարավորություն է տալիս գործող իշխանին իր իրավահաջորդին ներկայացնել որպես իր ներկայացուցիչ և փաստացի կառավարելով երկիրը՝ փորձ ձեռքբերել: Այդ իրավունքից օգտվել է Հանս-Ադամ Երկրորդի հայրը՝ իշխան Ֆրանց Յոզեֆը Լիխտենշտեյնը: Ըստ իշխանի՝ թագաժառանգը պետք է ստանձնի կառավարումն այն պահից, երբ պատրաստ է Սահմանադրությունը և ոչ թե գործող միապետի անգործունակության և մահվան դեպքում: Ներկայումս Հանս-Ադամ Երկրորդը, լինելով իշխան և օգտվելով նշյալ սահմանադրական իրավունքից, երկրի փաստացի կառավարումը հանձնել է որդուն՝ իշխան Ալոիզին: Սակայն հանրաքվեն իշխանին «աշխատանքից ազատելու» միակ եղանակը չէ: Երկրում գործում է «Իշխանական ընտանիքի մասին» օրենքը, համաձայն որի՝ իշխանական ընտանիքի՝ քվեարկության իրավունք ունեցող անդամները, կարող են քվեարկությամբ անվստահություն հայտնել գործող իշխանին՝ դադարեցնելով վերջինիս լիազորությունները որպես ընտանիքի և

երկրի ղեկավար: Ի տարբերություն եվրոպական բոլոր միապետական ընտանիքների, Լիխտենշտեյնի իշխանական ընտանիքը, որն, ի դեպ Եվրոպայի ամենահարուստ թագավորական ընտանիքն է, իր ծախսերը հոգում է ոչ թե պետական միջոցների, այլ ընտանեկան բիզնեսներից ստացվող եկամուտների հաշվին: Պետության ծախսերը, երբեմն, սուբսիդավորվում են իշխանի ընտանեկան բիզնեսներից գոյացող շահույթի հաշվին:

Միապալատ թե՞ երկպալատ խորհրդարան

Իշխանի կարծիքով, առավել նպատակահարմար է միապալատ խորհրդարանը ծախսերի և արդյունավետության տեսանկյունից: Ավելին, եթե հաշվի առնենք, որ երրորդ հազարամյակի պետությունում, համաձայն իշխանի տեսլականի, տեղական ինքնակառավարման մարմինները ստանալու են լայն լիազորություններ՝ կորում է երկպալատ խորհրդարանի իմաստը: Բոլոր այն երկրներում, որտեղ առկա են երկպալատ խորհրդարաններ, պալատներից մեկը գործում է ավանդույթի ուժով և ունի առավել խորհրդանշական նշանակություն:

Մարդկության վերաբերյալ

Իշխանի պնդմամբ, մարդկության զարգացումը տեղի է ունեցել չափազանց սրընթաց, և մարդկությունը դեռևս այդ զարգացման հետ համակերպվելու խնդիր ունի: Նա ուշագրավ հաշվարկ է արել՝ պնդելով, որ եթե մարդկության ամբողջ պատմությունը խտացնենք մեկ օրացույցային տարում և հունվարի 1-ը համարենք 2 միլիոն տարի առաջ *Homos erectus*-ի հայտ գալու օրը, ապա տասներկու հազար տարի առաջ գյուղատնտեսության զարգացումը կլինի դեկտեմբերի 29-ը, իսկ 4000 տարի առաջ տեղի ունեցած ագրարային ժամանակաշրջանի ավարտը կխորհրդանշի դեկտեմբերի 31-ը:

Ապագայի պետությունը. Ինչպիսի՞ն պետք է լինի պետությունը երրորդ հազարամյակում

Իշխանի համոզմամբ, պետությունները պետք է լինեն ոչ այլ ինչ, քան ծառայություններ մատուցող հաստատություններ: Ավելին, իշխանը պետություն համեմատում է օդանավի հետ. եթե օդանավի խնդիրն է իր կազմակերպել իր ուղևորների ճանապարհորդությունը տարածության մեջ, ապա պետությունը պետք է ապահովի իր քաղաքացիների առաջընթացը ժամանակի ընթացքում: Եվ ուրեմն, երրորդ հազարամյակում պետության խնդիրը պետք է լինի ստեղծել այնպիսի մոդել, որպեսզի կարողանա լուծել հետևյալ խնդիրները.

1. կանխարգելել քաղաքացիական պատերազմները,
2. ծառայել ոչ միայն հասարակության արտոնյալ հատվածին, այլև ողջ բնակչությանը,
3. առավելագույնս ապահովել ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը,
4. լինել մրցունակ գլոբալացման ժամանակաշրջանում:

Ըստ իշխանի՝ այս ամենը հնարավոր կլինի իրագործել միմիայն այն պարագայում, եթե պետությունները գործեն որպես ծառայություններ մատուցող հաստատություններ, և քաղաքացին ունենա հնարավորություն ընտրելու ծառայություն մատուցողին: Մեր օրերում քաղաքացիներն իհարկե կարող են արտագաղթել, սակայն, ներկայումս ավելի ու ավելի են կրճատվում արտագաղթի հնարավորությունները: Նույնիսկ մի շարք ժողովրդավարական երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Կանադան, փոքրամասնություններն այս կամ այն պատճառով համարում են, որ ոտնահարված են իրենց իրավունքները: Եվ եթե պետությունը ցանկանում է ունենալ ուժեղ ժողովրդավարություն, օրենքի գերակայություն և բարեկեցություն, ապա պետք է հրաժարվի իր տարածքի հանդեպ ունեցած մոնոպոլ իրավունքներից՝ հնարավորություն տալով բնակչությանը «արտագաղթել տարածքի հետ միասին», կամ, այլ կերպ

ասած, դուրս գալ պետության կազմից: Հարց է առաջանում, թե որքան պետք է լինի ինքնորոշման իրավունք ունեցող ներպետական միավորների մեծությունը: Որքան մեծ լինեն այդ միավորները, այդքան մեծ կլինի պետության կազմաքանդման վտանգը: Ուստի, ամեն պետություն ինքնուրույն պետք է որոշի նվազագույն և այլևս բաժանման ոչ ենթակա միավորի մեծությունը: Փոքր համայնքների պարագայում դժվար կլինի համոզել բնակչությանը առանձնանալ և առանձին պետություն ձևավորել: Այս պարագայում պետք է որոշակի լիազորություններով օժտել փոքր համայնքներին կամ, այլ կերպ ասած, տեղական ինքնակառավարման մարմիններին: Իսկ ինչպե՞ս հասնել ապագայի պետությանը և ինչպե՞ս պետք է բաշխվեն լիազորությունները կենտրոնական և տեղական իշխանությունների միջև: Այս հարցերը կքննարկենք ստորև:

<u>Առաջին քայլերը դեպի երրորդ հազարամյակի պետություն</u>

Հանս-Ադամ Երկրորդը կարծում է, որ նախ պետք է իրականացնել երեք հիմնական բարեփոխումներ՝ կենսաթոշակների ոլորտում, աշխատաշուկայի ոլորտում և փոխել սոցիալական պետության մոդելը՝ սոցիալական գործառույթները վերապահելով համայնքներին:

Գրքում հիմնավորվում է, որ, կյանքի տևողության աճին զուգահեռ, պետք է ավելացնել կենսաթոշակային տարիքը և ձեռնպահ մնալ այնպիսի համակարգ ստեղծելուց, որը գրավիչ կդարձնի օր առաջ կենսաթոշակի անցնելը: Իշխանը, ընդհանուր առմամբ, կուտակային մոդելի կողմնակից է, այսինքն՝ կենսաթոշակ, որը գոյանում է աշխատելու տարիներին անհատի կատարած հատկացումներից: Քննադատները կարող են պնդել, որ այն ավելի կմեծացնի հասարակության հարուստ և աղքատ շերտերի միջև առկա ճեղքվածքը, սակայն ըստ իշխանի, խնդիրը կարելի է լուծել պարտադիր համընդհանուր վճարի սահմանմամբ, որը կբաշխվի հօգուտ նվազ վճարունակ մարդկանց՝ նվազեցնելով կենսաթոշակ ստացող քաղաքացիների եկամուտների անհավասարությունը:

Ինչ վերաբերում է աշխատանքի շուկային, ապա գործազրկությունը խնդիր չէր նախքան համատարած ավտոմատացումը և հետարդյունաբերական զարգացումը, երբ արտադրությունը առավել աշխատատար էր: Ավտոմատացման աճին զուգընթաց, 20-րդ դարում զարգացած երկրները գործազրկության խնդիրը փորձել են լուծել ցածր հարկման, նվազեցված վարչարարության միջոցով, ինչպես նաև բարձրացնելով օրենքի գերակայության աստիճանը և բնակչության կրթական ցենզը: Իշխանի կարծիքով, իրավիճակն անփոփոխ կմնա նաև 3-րդ հազարամյակում: Սակայն առավել նպատակահարմար է զբաղվածության ոլորտում քաղաքականությունը վերապահել տեղական ինքնակառավարման մարմիններին: Նախքան այդ, անհրաժեշտ է վերանայել զարգացած երկրներում գործող բավականին բարձր գործազրկության նպաստներն ու նվազագույն աշխատավարձը: Զբաղվածության քաղաքականությունը պետք է խրախուսի հնարավորինս արագ աշխատանքի անցումը, քանի որ, ըստ իշխանի՝ փորձը ցույց է տալիս, որ որքան երկար է մարդը մնում գործազուրկ, այնքան դժվար է նրան աշխատանք գտնելը:

Եվ վերջապես, որպես սոցիալական քաղաքականության գործիքները համայնքներին փոխանցելու հիմնավորում իշխանը բերում է համերաշխության փաստարկը: Փոքր համայնքներում մարդկանց մեծ համերաշխության զգացումն ավելի բարձր է, և տեղական իշխանություններն ավելի մոտ են քաղաքացուն և վերջինիս խնդիրներին, քան հաճախ քաղաքացու խնդիրներին անհաղորդ կենտրոնական իշխանությունները: Քաղաքացիները, երբեմն, փորձում են չարաշահել սոցիալական ապահովության համակարգը և օգտվել այնպիսի վճարներից, որոնց կարիքը օբյեկտիվորեն չունեն: Ուստի, կենտրոնական իշխանությունների կողմից վերահսկողությունը կարող է ծախսատար լինել, իսկ տեղական իշխանությունները հնարավորություն ունեն առավել արդյունավետ պայքարել չարաշահումների դեմ:

<u>Կրթական համակարգը</u>

Իշխանի կարծիքով, ներկայիս կրթական համակարգը անարդյունավետ է և կրթություն ստացած շատ քաղաքացիներ բախվում են գործազրկության խնդրին: Ուստի, հարց է առաջանում. արդյո՞ք պետք է կրթության խնդիրները վերապահված լինեն պետությանը, թե՞ համայնքներին, համայնքների միություններին և մասնավոր հատվածին: Սակայն, եթե պետությունը պետք է զբաղվի կրթական ոլորտի հիմնախնդիրներով, ապա այն պետք է իրականացվի վաուչերների համակարգի միջոցով: Պետությունը ներկայումս սուբսիդավորում է կրթական համակարգը՝ հիմնվելով հավասարության սկզբունքի վրա: Ե՛վ լավ, և՛ վատ դպրոցների ֆինանսավորման հիմքում դրվում են միևնույն չափորոշիչները, իսկ կրթական քաղաքականության ձախողման լավագույն ապացույցն այն է, որ որոշ ծնողներ հրաժարվում են իրենց զավակներին ուղարկել պետական դպրոցներ և նախընտրում են վճարել մասնավոր դպրոցներին: Իշխանը առաջարկում է ֆինանսավորել ոչ թե համակարգը, այլ կրթություն ստացողին՝ վերջինիս տրամադրելով վաուչեր: Վերջինս իրավունք կունենա ինքնուրույն ընտրելու, թե ո՞ր դպրոցում իրացնի իր վաուչերը, այդպիսով ֆինանսավորելով դպրոցը, իսկ դպրոցների միջև աճող մրցակցությունը կբարձրացնի կրթության որակը:

<u>Տրանսպորտը և ենթակառուցվածքները</u>

Ազգայնականները մշտապես պնդել են ազգային ավիափոխադրողների, ջրային ուղիների, ճանապարհների և, վերջապես, ազգային երկաթուղու անհրաժեշտության մասին, բնականաբար՝ «ազգի լավագույն շահերից» ելնելով: Իշխանը առաջարկում է մտավարժանք անել և պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե վերջին 200 տարիների ընթացքում եվրոպական երկրների կառավարությունները հրաժարվեին ահռելի գումարներ ներդնել ենթակառուցվածքների ոլորտում: 19-րդ դարում, երբ երկաթուղային հաղորդակցությունը նոր էր ի հայտ եկել, ոլորտում գործում էին բազմաթիվ մասնավոր ընկերություններ, որոնք ստեղծել էին բավականին խիտ ցանց, որը միմյանց էր կապում Եվրոպայի քաղաքներն ու գյուղերը: Աստիճանաբար պետությունը սկսեց միջամտել ոլորտում իրականացվող քաղաքականությունը՝ մտքում ունենալով ազգի լավագույն շահերը: Արդյունքում, երկաթուղային ընկերությունները կամ մասնավորեցվեցին կամ էլ ենթարկվեցին խիստ կարգավորումների: Երկաթուղային ընկերությունները ստիպված էին հոգալ իրենց շենքերի և երկաթուղու սպասարկման ծախսերը, իսկ ավտոճանապարհները կառուցվում էին հարկատուների միջոցների հաշվին: Արդյունքում, ունեցան բազմաթիվ ավտոճանապարհներ և քիչ երկաթուղիներ: Դիցուք, գնացքներն ավելի արագընթաց են, զբաղեցնում են շատ ավելի քիչ տարածք և իրականացնում անհամեմատ ավելի մեծ մասշտաբների ուղևորափոխադրում: Ուստի, եթե չլինեին սոցիալիստական համոզմունքները և պետության անհարկի միջամտությունը, ապա խիտ ավտոճանապարհների փոխարեն կլինեին խիտ երկաթգծեր, որոնք կնպաստեին մարդկանց առավել մեծ շարժունակությանը և ավելի քիչ վնաս կհասցնեին շրջակա միջավայրին, իսկ ավտոմեքենաները կօգտագործվեին հիմնականում որպես ներքաղաքային կամ ներգյուղական տրանսպորտային միջոց: Հետևաբար, ազատական գաղափարների կողմնակից իշխանը առաջարկում է ձեռնպահ մնալ ենթակառուցվածքների ոլորտում անհարկի պետական միջամտությունից:

<u>Հանրային ֆինանսները</u>

Իշխանի համոզմամբ, երրորդ հազարամյակի պետության կենտրոնական իշխանությանը պետք է վերապահված լինեն հետևյալ երեք հիմնական գործառույթները. 1. արտաքին քաղաքականության իրականացում, 2. օրենքի գերակայության ապահովում և կարգուկանոնի հաստատում, 3. կրթության ֆինանսավորում: Ուստի, հարկային եկամուտների մեծ մասը պետք է փոխանցվեն տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներ: Այս պարագայում, պետությունը չի ունենա մեծ ֆինանսական միջոցներ գեներացնելու անհրաժեշտություն, և ցածր

հարկերը առավել գրավիչ կդարձնեն պետությունն արտաքին ներդրողների համար: Բյուջեի հավելուրդը կենտրոնական կառավարությունը կարող է օգտագործել պետական պարտքի աստիճանաբար մարման կամ առավել աղքատ համայնքներին ֆինանսավորելու համար: Քաղաքական գործիչներն, ըստ իշխանի, երբեմն կազմում են իրենց սուբյեկտիվ ընկալումներին և քաղաքական շահերին համահունչ «շքեղության ապրանքների» ցուցակներ, որոնք պետք է հարկվեն ավելի բարձր դրույքաչափով: Այդպիսով, նրանք փորձում են ստանալ այն ոլորտների շահառուների ձայները, որոնց ապրանքներն ո ծառայությունները չեն ներառվում այդ ցուցակում: Այդպիսի քաղաքականությունը վնասում է առավել աղքատ շերտին, քանի որ վերջիններս նույնպես ժամանակ առ ժամանակ սպառում են այն ապրանքները, որոնք այս կամ այն պատճառով հարկվում են ավելի բարձր անուղղակի հարկով: Ուստի, իշխանի կարծիքով, ավելի արդյունավետ է աղքատներին ուղղակի օգնություն տրամադրելը, քան սպառողի հարկային բեռն ավելացնող և ոլորտի մրցունակության վրա բացասաբար ազդող տարբերակված անուղղակի հարկային դրույքաչափերի ներդրումը:

Անուղղակի հարկի դրույքաչափի վերաբերյալ իշխանը նշում է, որ ոչ այնքան դրույքաչափն է կարևոր, որքան միևնույն դրույքաչափի կիրառումը բոլոր ապրանքների և ծառայությունների համար:

Հանս-Ադամ Երկրորդը վստահ է, որ անուղղակի հարկման արդյունքում առաջացած գումարները պետք է գնան պետական գանձարան, իսկ ուղղակի հարկումից՝ գույքահարկից, շահութահարկից և եկամտահարկից գոյացող միջոցները՝ համայնքային բյուջեներ: Հակառակը կարող է առաջացնել խզվածքներ շուկայում: Իշխանը բերում է Միացյալ Նահանգների օրինակը: 1970-ականներին ԱՄՆ-ի Թեքսաս նահանգում թեպետ չկար վաճառքի հարկ (sales tax), այնուամենայնիվ, ալկոհոլային խմիչքների վրա նահանգի արևելյան հատվածում դրված էին բարձր հարկեր: Արևելյան Թեքսասը սահմանակից էր Արքանզաս նահանգին, որտեղ ալկոհոլը չէր հարկվում, սակայն այլ ապրանքները հարկվում էին բարձր վաճառքի հարկով: Նահանգների միջև ընկած Թեքսականա քաղաքի գլխավոր փողոցի մի հատվածում գործում էին բոլոր ռեստորանները, խանութները և սրճարանները, իսկ մյուս հատվածում՝ տեղակայված էին ավտոմեքենաներ վաճառողների ցուցասրահները: Բնակիչները հաճախ ստիպած էին երկար ճանապարհ անցնել մեքենա գնելու կամ խանութ կամ ռեստորան գնալու համար, ինչը ստեղծում էր լրացուցիչ անհարմարություններ բնակիչների համար:

Շվեյցարիայի և Լիխտենշտեյնի օրինակով իշխան Լիխտենշտեյնը պնդում է, որ կեղծ է այն դրույթը, որ համայնքների կողմից իրականացվող տարբերակված հարկային քաղաքականությունը էականորեն կավելացնի բնակչության հոսքերը բարձր եկամտահարկի կամ շահութահարկի դրույքաչափ կիրառող համայնքներից դեպի առավել ցածր դրույքաչափ կիրառող համայնքներ: Վերջինիս պնդմամբ, հարկային քաղաքականությունը ներդրողներին կողմնորոշող տնտեսական գործոններից միայն մեկն է և ոչ ավելի կարևոր, քան աշխատուժի քանակը, համայնքային ենթակառուցվածքների վիճակը, հեռավորությունը խոշոր շուկաներից և այլն:

Երրորդ հազարամյակի պետությունում կարևոր են բնական պաշարների հանդեպ իրավունքները: Եթե այդ իրավունքները պատկանեն կենտրոնական իշխանություններին, ապա հարուստ բնական պաշարներով համայնքների համար մեծ կլինի գայթակղությունը առանձնանալ և ստեղծել առանձին պետություն: Միաժամանակ, իշխանի կարծիքով, կարիք չկա բազմաթիվ պարտականություններ ունեցող տեղական իշխանություններին ծանրաբեռնել ևս մեկով: Ըստ իշխանի, բնական պաշարների հանդեպ սեփականություններ պետք է ունենան առանձին հողակտորների սեփականատերերը: Այս քաղաքականությունը ներկայումս կիրառվում է ԱՄՆ-ում, որտեղ ընդերքի հարստությունը պատկանում է ոչ թե պետությանը, այլ հողի սեփականատիրոջը, որն առանց հողը վաճառելու կարող է վաճառել ընդերքի հանդեպ

ունեցած իր իրավունքները՝ պահպանելով հողի սեփականության իրավունքը: Իշխանի կարծիքով, այս հանգամանքը ամենևին չի խոչընդոտել ԱՄՆ-ի հանքաարդյունաբերության ոլորտի զարգացմանը: Այնուամենայնիվ, իշխանը պնդում է, որ հողի և ընդերքի նկատմամբ սեփականության իրավունքի տարանջատումը ԱՄՆ-ում առաջացրել է բարդ խնդիրներ և ցանկալի չի համարում այդ երկու իրավունքների տարանջատումը միմյանցից: Ինչ վերաբերում է ծովերում առկա ռեսուրսներին, ապա պետության իրավասության ներքո գտնվող ջրային տարածների ռեսուրսների հանդեպ սեփականության իրավունքը պետք է վերապահվի պետության կենտրոնական իշխանություններին:

Դրամավարկային քաղաքականություն

Հանս-Ադամ Երկրորդի կարծիքով, միասնական մետաղական արժույթը, որը կիրառելի կլիներ ողջ աշխարհում և կթողարկվեր մեկ անկախ մարմնի կողմից, լավագույն լուծումը կլիներ: Հիշեցնենք, որ տրակտատը գրվել է 2009թ.-ին, երբ դեռ քիչ բան էր հայտնի սահմանափակ առաջարկ ունեցող կրիպտոարժույթի՝ բիթքոյինի մասին: Այնուամենայնիվ, իշխանի կարծիքով, կա արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացման երեք տարբերակ:

Առաջին տարբերակը տնտեսագետների շրջանում հայտնի է որպես արժութային խորհուրդ: Պետությունը հրաժարվում է իր անկախ դրամավարկային քաղաքականությունից՝ գործածելով խոշոր երկրի առավել կայուն արժույթը: Փոքր պետություններում կիրառվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը բավականին բարձր է, քանի որ մեծ է արժույթի փոխարժեքի տատանումը և բարձր փոխարժեքն ապահովում է փոխառուին հնարավոր արժութային ռիսկերից: Բացի այդ, փոքր պետությունների արժույթներն առավել խոցելի են սպեկուլյացիոն գործարքների արդյունքում: Ինչպես արդեն նշեցինք, Լիխտենշտեյնը և Շվեյցարիան 1980թ.-ին միասին կազմել են տնտեսական և արժութային միություն, իսկ Լիխտենշտեյնում ներկայումս շրջանառվում է շվեյցարական ֆրանկը:

Երկրորդ տարբերակը՝ բազմաթիվ արժույթների արտոնումն է: Այդ դեպքում պետությունը պետք է հայտարարի, թե որ արժույթով է կատարելու և ընդունելու վճարումները: Նույնը պետք է անեն համայնքները: Այս իրավիճակը կհանգեցնի արժույթների միջև մրցակցության և ուշ թե շուտ առավել կայուն մետաղական արժույթները շրջանառությունից դուրս կմղեն միմյանց հետ մրցակցող թույլ արժույթներին:

Երրորդ տարբերակը իշխան Լիխտենշտեյնը ներկայացրել է մանրամասն: 1970-ականներին, երբ դեռ չէր ստորագրվել տնտեսական և արժութային միության մասին համաձայնագիրը Շվեյցարիան հայտարարվեց, որ Լիխտենշտեյնը ոչ ռեզիդենտ արժութային գոտի է, ինչը պատճառ հանդիսացավ, որ իշխանը մտածի ոսկյա մետաղադրամներ թողարկելու մասին: Այս պարագայում կա ռիսկ, որ քաղաքացիները կհալեցնեն մետաղադրամները, եթե ոսկու շուկայական արժեքը գերազանցի մետաղադրամի անվանական արժեքը, երևույթ, որի մշտապես տեղի է ունեցել նախքան թղթե արժույթի զանգվածային օգտագործումը Եվրոպայում: Ըստ իշխանի, ոսկու գների տատանմանը զուգընթաց պետք է փոխվի նոր թողարկվող մետաղադրամներում օգտագործվող ոսկու տեսակարար կշիռը, սակայն իշխանը, բնականաբար, ընդունում է, որ դեռևս առկա է ռիսկն արդեն իսկ թողարկված մետաղադրամների հետ կապված: Եվ վերջապես, եթե չկնքվեր Շվեյցարիայի հետ նշված համաձայնագիրը, Լիխտենշտեյնը կարող էր թողարկել իր էլեկտրոնային փողը, որը պետք է 100%-ով ապահովված լիներ կայուն արտարժույթով: Այդ դեպքում Լիխտենշտեյնի արժույթը կունենա բարձր եկամտաբերություն ապահովող ներդրումային ակտիվ:

Կենտրոնական բանկերի անկախությունն ապահովելու նպատակով իշխանը նշում է, որ վերջիններս պետք է պատկանեն ոչ թե պետությանը կամ համայնքներին, այլ անհատ ներդրողներին: Շահաբաժինները պետք է վճարվեն այն պարագայում, երբ կենտրոնական բանկի

պահուստները հասել են փողի ընդհանուր առաջարկի որոշակի տոկոսին: Ինչ վերաբերում է ֆինանսական ճգնաժամերին, ապա, ըստ իշխանի, դրանք ոչ թե շուկայի ձախողումն են, այլ՝ պետության, որը չի ապահովում պատշաճ վերահսկողություն: Իշխանի կարծիքով, ֆիրմաների հաշվեկշիռներում ակտիվների գնահատումը ուռճացված է, ինչն էլ ապակողմնորոշում է ներդրողներին: Իշխանը կարևորում է ֆինանսական հաշվետվությունների և հատկապես հաշվեկշիռների թափանցիկությունը ֆինանսական ճգնաժամերից խուսափելու նպատակով:

<u>Ինչպե՞ս կառուցել երրորդ հազարամյակի ապակենտրոն պետությունը</u>

Եթե ընդհանրացնենք, ապա աշխարհի պետությունները կարելի է բաժանել երկու մասի՝ ժողովրդավարական և բռնապետական: Նախ և առաջ, պետք է Շվեյցարիայի և Լիխտենշտեյնի մոդելով ուղղակի ժողովրդավարության ուղղությամբ քայլեր անել ժողովրդավարական պետություններում և դրանց միջոցով այդ մոդելը տարածել աշխարհով մեկ: Այն, բնականաբար, դժվար կլինի, քանզի քաղաքական գործիչները դժվար թե ուզենան կորցնել իրենց ազդեցության լծակների մի մասը: Ուստի, լուծումը մոտիվացված մարդկանց կողմից ուղղակի ժողովրդավարություն ստեղծել պահանջող կուսակցությունների հիմնումն է: Ըստ իշխանի, պարտադիր չէ, որ այդպիսի կուսակցությունները հասնեն իշխանության: Ներկայումս Եվրոպայում կանաչների կուսակցություններն ունեն փոքր ընտրազանգված և իշխանական կուսակցություններ չեն, սակայն կարողացել են իրենց օրակարգը դարձնել խոշոր կուսակցությունների օրակարգի մի մասը և օրակարգ թելադրել: Ըստ իշխանի՝ ուղղակի ժողովրդավարության կողմնակիցների բնական դաշնակից պետք է լինեն լրատվամիջոցները: ՈՒղղակի ժողովրդավարության պարագայում լրատվամիջոցները կունենան ավելի մեծ ազդեցության լծակներ և կլինեն ավելի լսելի:

Այլ է իրավիճակը բռնապետությունների պարագայում: Եթե հակիրճ, ապա իշխանը արձանագրում է, թե որ ժողովրդավարական երկրների սահմանադրությունները պետք է պարունակեն դրույթներ այն մասին, թե երբ պետք է ներխուժեն բռնապետություններ՝ հանուն ժողովրդավարության: Իշխանը ընդունում է, որ ցայսօր արևմտյան երկրների կողմից ժողովրդավարության ներմուծման, առավել ևս՝ պարտադրման բոլոր փորձերը եղել են անհաջող և Ճապոնիան ու Գերմանիան բացառություններ են, որոնք ապացուցում են օրինաչափությունը: Միևնույն ժամանակ, իշխանը կասկածամտությամբ է վերաբերում ներխուժել-չներխուժելու հարցը ՄԱԿ-ի շրջանակներում քննարկելու հնարավորությանը: Հանս-Ադամ Երկրորդն առաջարկում է բավականին վիճահարույց լուծում. ԱՄՆ-ի կառավարությանը պետք է վերապահվի անհրաժեշտության դեպքում ռազմական միջամտության իրագործումը: Իշխանը հիմնավորում է, որ ներկայումս ռազմական տեսանկյունից միայն ԱՄՆ-ը ունի այդպիսի հնարավորություն և Իրաքյան վերջին պատերազմի ժամանակ դաշնակիցների կողմից ուներ ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական աջակցության կարիք: Մյուս կողմից, ներկայումս ԱՄՆ-ի կամքին դեմ ժողովրդավարական այլ պետությունների հնարավոր ներխուժումները դատապարտված են ձախողման: Վառ օրինակը 1956թ.-ի Սուեզյան ճգնաժամն էր, երբ Միացյալ Թագավորությունը, Ֆրանսիան և Իսրայելը ԱՄՆ-ի ճնշման տակ ստիպված էին հետ կանգնել իրենց մտադրություններից և նահանջել: Ըստ իշխանի՝ ԱՄՆ-ը մյուս ժողովրդավարական երկրների հետ պետք է հստակ մշակի, թե ինչպիսի հանգամանքների պարագայում է արդարացված ներխուժումը: Ռազմական գործողությունը պետք է տևի հնարավորինս կարճ, որպեսզի չթուլացնի և երկրորդ պլան չմղի բռնապետության ներսում ժողովրդավար ուժերին: ԵՄ-ն, լինելով փափուկ ուժ, բռնապետության տապալումից հետո պետք է քայլեր անի ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման գործում, ինչի ինստիտուցիոնալ կարողություններն ունի:

Երրորդ հազարամյակի պետության սահմանադրությունը

Վերոշարադրյալ գաղափարներին համահունչ և վերջիններիս իրականացման նպատակով իշխանը գրքի հավելվածում կետ առ կետ, հոդված առ հոդված ներկայացնում է երրորդ հազարամյակի պետության սահմանադրությունը, որը բխում է պետության՝ որպես ծառայություններ մատուցող հաստատության, հիմնադրույթից: Փրինսթոնի համալսարանում իշխանի կողմից հիմնադրված՝ Ժողովուրդների ինքնորոշման Լիխտենշտեյն ինստիտուտը մշակում է սահմանադրությունից բխող օրենքներ, որոնք պետք է կիրառվեն իշխանի մշակած մոդելային պետությունում: Հատկանշական է, որ գրքի 161-րդ էջում իշխանը ընթերցողին հրավիրում է կապվել ինստիտուտի հետ, եթե վերջինս ունի օրենսդրական առաջարկներ՝ նշելով ինստիտուտի գործունեության հասցեն և էլեկտրոնային հասցեն: Գրքում նկարագրված հակիրճ և ընդհանրական դրույթներով սույն ակնարկի շրջանակներում ներկայացված պետության կառավարման մոդելը հաջողությամբ արդեն իսկ կիրառվել է Լիխտենշտեյնում և, մեր կարծիքով, արժանի է ուշադրության հատկապես այն քաղաքական գործիչների և անհատների կողմից, ովքեր կարևորում են ուղղակի ժողովրդավարությունը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Ներկայացված սահմանադրության մոդելն ինքնին մարդակենտրոն է՝ խարսխված քաղաքացիական պատերազմների բացառման և պետության, ինչպես նաև հանրային ֆինանսների առավելագույնս արդյունավետ կառավարման սկզբունքների վրա: